



Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՈւղեՑուղի

Քաղաքացիական հասարակության դերը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում



2013թ.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույցը պատրաստվել է Ադրբեջանի Իրավական կրթության հասարակություն կազմակերպության կողմից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) և ՄԻԵԴ վճիռների կատարման վարչության նախկին փաստաբան տիկին Լուսիա Միարայի և Լեհաստանի Մարդու իրավունքների Հելսինկյան հիմնադրամի իրավաբան տիկին Դոմինիկա Բիչավսկա-Սինիարսկայի կողմից պատրաստված նյութերի հիման վրա:

Ուղեցույցը կազմվել է “Հարավային կովկասում ՀԿ-երի մասնակցության ամրապնդումը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում” ծրագրի շրջանակներում՝ Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ:

Ծրագիրը իրականացվել է «Մարդու իրավունքների տուն» ցանցի (<http://www.humanrightshouse.org/>) և Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանցի (www.caucasusnetwork.org) հետևյալ անդամների և գործընկերների կողմից՝

- Սահմանադրության հոդված 42 (Վրաստան)
- Ադրբեջանի իրավաբանների միություն (Ադրբեջան)
- Ժողովրդավարության և մարդու իրավունքների ռեսուրսային կենտրոն-հասարակական միություն (Ադրբեջան)
- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (Հայաստան)
- Մարդու իրավունքների Հելսինկյան հիմնադրամ (Լեհաստան)
- Մարդու իրավունքների կենտրոն (HRDIC) (Վրաստան)
- Թբիլիսիի մարդու իրավունքների տուն (Վրաստան)
- Մարդու իրավունքների տուն հիմնադրամ (Նորվեգիա)
- Իրավական կրթության հասարակություն (Ադրբեջան)
- Իրավունքի գերակայություն, ՀԿ (Հայաստան)

Ֆինանսավորումը իրականացրել են՝



Ministry of Foreign Affairs
of the Czech Republic



NORWEGIAN MINISTRY
OF FOREIGN AFFAIRS



HUMAN RIGHTS HOUSE
FOUNDATION

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. Պետությունների պատասխանատվությունը անօրինական գործողությունների դեպքում
- II. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը
- III. Վճիռների կատարման գործընթացի թափանցիկությունը
- IV. Երկուդի ընթացակարգ
- V. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը կատարման գործընթացին
- VI. Հասարակական կազմակերպությունների դերը ազգային մակարդակում վճռի կատարման նկատմամբ վերահսկողության ուժեղացման գործում

I. Պետությունների պատասխանատվությունը անօրինական գործողությունների դեպքում

1959թ., երբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ստեղծվեց, որի մանդատն էր՝ վճիռներ կայացնել պետությունների դեմ, Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեին¹ (Կոմիտե) տրվեց պատասխանող կառավարությունների դեմ կայացրած վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման գործառույթը²: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) այն շատ համառոտ սահմանել է.

«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են: Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման հիմնական սկզբունքները և շրջանակները ամրագրված են միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներում: Համաձայն այդ սկզբունքների՝ իրավախախտը պարտավորվում է փոխհատուցել պատճառված վնասը և կանխել դրա կրկնությունը հետագայում. «Պետության կողմից կատարված միջազգայնորեն իրավախախտ գործողությունը առաջացնում է այդ պետության համար միջազգային պատասխանատվություն»³:

Պապամիչալոպուլոսն ընդդեմ Հունաստանի գործով⁴ վճռում Դատարանը ընդլայնել է ՄԻԵԿ 46-րդ հոդվածը վճիռների կատարման վերաբերյալ.

«Դատարանը արձանագրում է՝ որևէ խախտում պատասխանող Պետության վրա իրավական պարտավորություն է դնում վերջ դնելու այդ խախտմանը և վերացնելու դրա հետևանքներն այնպես, որպեսզի *որքան հնարավոր է վերականգնված լինի նախքան խախտումը գոյություն ունեցած վիճակը*: Գործի կողմեր հանդիսացող Պայմանավորվող պետություններն ըստ էության *ազատ են* Դատարանի կողմից խախտումը արձանագրած վճռի կատարման *միջոցի ընտրության* հարցում: Վճռի կատարման միջոցի ընտրության ազատությունն արտացոլում է Պայմանավորվող պետությունների՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման հիմնական պարտականությանն ամրակայված ընտրության ազատության սկզբունքը (հոդված 1): Այն դեպքում, երբ խախտման բնույթը *restitutio in*

¹ Եվրոպայի խորհուրդը որոշումներ կայացնող մարմին է, որի կազմը բաղկացած է անդամ պետությունների արտաքին գործերի նախարարներից կամ Ստրասբուրգում նրանց մշտական դիվանագիտական ներկայացուցիչներից:

² Կոնվենցիայի հոդված 46 (նախկինում՝ հոդված 32, ապա՝ հոդված 53):

³ Միջազգային իրավունքի հանձնաժողով, UN doc. A/CN.4/L.602/Rev.I, July 26, 2001 (ILC draft Articles on State Responsibility):

⁴ *Պապամիչալոպուլոսն ընդդեմ Հունաստանի*, դիմում Հ-4556/89, վճիռը կայացվել է 31 հոկտեմբերի 1995թ., կետ 34:

integrum հնարավորություն է տալիս, պետության պարտականությունն է դառնում ապահովել դրա իրականացումը, քանի որ Դատարանն այն իրականացնելու համար չունի իշխանություն և պրակտիկ հնարավորություններ: Այնուամենայնիվ, եթե ներպետական օրենսդրությունը չի նախատեսում կամ նախատեսում է միայն խախտման հետևանքների մասնակի վերականգնման հնարավորություն, ապա հոդված 50-ը Դատարանին իրավունք է վերապահում տուժած կողմին տրամադրել համապատասխան արդարացի փոխհատուցում»⁵:

Նախարարների կոմիտեն ներկայացրել է վճիռների կատարման մանրամասն ընթացակարգ, որը շարադրված է Նախարարների կոմիտեի կանոնակարգում⁶: Մինչ վերջերս, կատարման գործընթացի վերաբերյալ քիչ բան էր հայտնի: Աշխատանքը կատարվում էր կոմիտեի դոնփակ նիստերի ընթացքում՝ տեղեկատվության փոխանակում, Ստրասբուրգում պետությունների ներկայացուցիչների միջև բանակցություններ և քննարկումներ: Աշխատանքի առավել տեսանելի վկայությունն ընդունված վերջնական բանաձևն էր, երբ վճիռը համարվում էր ամբողջությամբ կատարված, և կոմիտեի վերահսկողությունը վճռի կատարման նկատմամբ նախատեսվում էր ավարտել: Չնայած որ, վերջնական բանաձևերը ներառում էին պատասխանող պետության կողմից վճռի կատարմանն ուղղված բոլոր միջոցները, համակարգը զուրկ էր թափանցիկությունից և համարվում էր անհասանելի:

II. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը

Որպեսզի խախտման հետևանքով տուժած կողմի համար հնարավորինս ապահովվի հասնելու *restitutio in integrum*-ին, պատասխանող պետությունը պետք է ընդունի, այսպես կոչված, **անհատական բնույթի միջոցներ**: *Restitutio in integrum*-ի սկզբունքը պահանջում է որպեսզի տուժած կողմը բերվի, որքան հնարավոր է, այնպիսի վիճակի, որում այն գտնվել է նախքան Կոնվենցիայի խախտումը: **Անհատական բնույթի միջոցները** սովորաբար ներառում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից որոշված արդարացի փոխհատուցման վճարում դիմումատուին, բայց կարող են նաև ներառել, օրինակ՝ ունեցվածքի վերականգնում, վարույթների նորոգում կամ կալանքից ազատ արձակում:

⁵ Պապամիչայրույունս ընդդեմ Հունաստանի, դիմում Ն-4556/89, վճիռը կայացվել է 31 հոկտեմբերի 1995թ., կետ 47:

⁶ Նախարարների կոմիտեի կանոնները վճիռների կատարման վերահսկողության և փոխադարձ համաձայնությամբ հարցի լուծման պայմանների վերաբերյալ, փոփոխվել է մի քանի անգամ, հասանելի է www.coe.int/t/dghl/monitoring/execution/Source/Documents/Docs_a_propos_/CMrules2006.en.pdf

Քիչ հայտնի, սակայն շատ ավելի կարևոր գործընթաց է համարվում, այսպես կոչված, **ընդհանուր բնույթի միջոցների** ընդունումը: Այն պահանջում է, որպեսզի հնարավոր բոլոր քայլերը ձեռնարկվեն կանխելու նմանատիպ խախտումները հետագայում: **Ընդհանուր բնույթի միջոցները** դիտարկվում են յուրաքանչյուր գործի հիման վրա և կարող են ներառել



փոփոխություններ ներպետական օրենսդրությունում՝ ներպետական իրավական պաշտպանության միջոցների ներկայացում, դասընթացների կազմակերպում և իրազեկում, վարչական կամ դատական մարմինների պրակտիկայում փոփոխությունների խրախուսում: Միջոցները առաջարկում է պատասխանող պետությունը, որոնք գնահատվում են Նախարարների կոմիտեի կողմից (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման հարցերով վարչություն)⁷ իրենց արդյունավետության և բավարար լինելու տեսանկյունից:

Ինչպես վերը նշվեց, պետությունները ստանձնել են պարտավորություններ՝ համաձայն Կոնվենցիայի և միջազգային իրավունքի ընդհանուր առմամբ, կատարելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները: Դրանց չկատարումը կնշանակի Կոնվենցիայի լրացուցիչ խախտում: Կոնվենցիայի՝ 2010թ. թիվ 14 արձանագրությունը ⁸ ներկայացնում է խախտումներին արձագանքելու ընթացակարգը, ինչը թույլ է տալիս Դատարանին նման խախտման վերաբերյալ որոշում ընդունել: Ընթացակարգը կարող է կիրառվել, եթե Նախարարների կոմիտեն⁹ ձայների երկու երրորդի մեծամասնությամբ եզրակացնում է, որ պետությունը չի կատարել դատարանի վճիռը:

Այս ընթացակարգը կիրառվում է բացառիկ դեպքերում և կարող է դիտվել իբրև «օգնության կանչ» Նախարարների կոմիտեի կողմից պետության հետ հարաբերություններում: Կոմիտեն մշտապես փորձում է առաջին հերթին օգտագործել դիվանագիտական և քաղաքական ճնշումները մինչ վերադարձ Դատարան՝ օգնության և միջամտության համար: Հենց այն ժամանակ, երբ սկսում են կիրառվել ճնշումներ, քաղաքացիական հասարակությունը կարող է կարևոր դեր խաղալ:

⁷ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչությունը, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր քարտուղարության կազմում աջակցում է Նախարարների կոմիտեին իրականացնելու այս պարտականությունը՝ համաձայն Կոնվենցիայի:

⁸ Հոդված 46, տես ՄԻԵԿ-ի թիվ 14 արձանագրություն:

⁹ Որոշումը ընդունվում է միջանկյալ բանաձևի տեսքով: Միջանկյալ բանաձևերը կարող են կատարել մի շարք գործառնություններ, ներառյալ՝ մատնանշել կատարմանն ուղղված առաջընթացը կամ ծառայել որպես ճնշման միջոց պետության նկատմամբ:

III. Վճիռների կատարման գործընթացի թափանցիկությունը

Համաձայն Կոնվենցիայի թիվ 14 արձանագրությամբ ներկայացված բարեփոխումների¹⁰, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացը դարձել է էականորեն ավելի թափանցիկ:

Երբ Դատարանի վերջնական վճիռը փոխանցվում է Նախարարների կոմիտեին, կոմիտեի Քարտուղարությունը (Վճիռների կատարման վարչություն) նախաձեռնում է խորհրդատվություններ պատասխանող պետության հետ այն միջոցների շուրջ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել, ինչպես նաև՝ համաձայնեցնում ժամանակացույցը՝ կատարման վերաբերյալ ամսաթվերի հետ կապված: Այս սկզբնական փուլը պետք է տևի ոչ ավել քան վեց ամիս, որի նպատակն է պարզել պետության կողմից ընդունվող միջոցների ընկալման վերաբերյալ որևէ հնարավոր տարբերություններ:

Վեցամսյա ժամկետի ավարտից հետո պետությունը պարտավորվում է ներկայացնել գործողությունների ծրագիր կամ գործողությունների վերաբերյալ զեկույց¹¹՝ նշելով արդեն իսկ ձեռնարկված միջոցները, առաջարկվող միջոցները և դրանց կատարման ժամանակացույցը: Պետությունը, այնուհետև, պարտավորվում է, անհրաժեշտության դեպքում, զեկույցել Կոմիտեին (Վճիռների կատարման վարչության միջոցով) գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ բոլոր զարգացումների մասին:

Պատասխանող պետության կողմից ստացված տեղեկատվությունը հնարավորություն է տալիս Նախարարների կոմիտեին գնահատել՝ արդյոք այն կարող է դադարեցնել վճռի կատարման նկատմամբ վերահսկողությունը: Եթե անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկվել են, գործը կարող է փակվել՝ համաձայն վերջնական բանաձևի: Եթե ոչ, և հավանաբար, վճռի կատարումը պահանջում է որոշ ժամանակ, կոմիտեն պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու վճռի ավելի հուսալի կատարումը անդամ պետության կողմից: Տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ Վճիռների կատարման վարչությունը կարող է առաջարկել, որպեսզի գործը քննարկվի կոմիտեի՝ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման վերաբերյալ եռամսյակը մեկ կազմակերպվող նիստերից մեկի ընթացքում:

¹⁰ Տե՛ս Կոնվենցիայի թիվ 14 արձանագրությունը՝ <http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/Html/194.htm>

¹¹ Գործողությունների ծրագրով սահմանվում են այն միջոցառումները, որոնք պետությունը նախաձեռնում է իրականացնել դատարանի վճիռը կատարելու համար: Գործողությունների վերաբերյալ զեկույցով տրվում է վճռի կատարման նպատակով պետության կողմից ձեռնարկված միջոցառումների նկարագրությունը և բացատրություն ներկայացվում այն մասին, թե ինչու միջոցառումները շարունակելու կամ նոր միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն չկա: Գործողությունների վերաբերյալ զեկույցի հիման վրա Նախարարների կոմիտեն կարող է սկսել գործը փակելու գործընթացը:

Նախարարների կոմիտեի քարտուղարությունը (Վճիռների կատարման վարչություն) վերլուծում է ներկայացված գործողությունների ծրագիրը և գործողությունների վերաբերյալ զեկույցը: Այն նաև իրականացնում է համապատասխան հետազոտություն և կարող է, անհրաժեշտության դեպքում, կազմակերպել այցելություններ պատասխանող պետություն: Ընդունելով որևէ միջոց՝ պետությունը պետք է ցույց տա՝ ինչպես այն կազդի համապատասխան խնդրի լուծման վրա: Անհրաժեշտության դեպքում պետությունը պետք է ներկայացնի շոշափելի բարելավումների վերաբերյալ վիճակագրություն: Բոլոր գործերով պետք է ներդրվի մոնիթորինգային համակարգ, որը ցույց կտա, թե ինչպես պետությունները կարող են կանխել նմանատիպ խախտումները հետագայում, ինչպես նաև՝ համապատասխան միջոցների մանրակրկիտ ներկայացում, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել, եթե խնդիրը նորից առաջանա:

Կոմիտեի և պետության միջև միջոցների ընդունման վերաբերյալ դանդաղ ընթացքի կամ անհամաձայնության դեպքում՝ կոմիտեն իր տրամադրության տակ ունի հետևյալ միջոցները՝

- Քննման ինտենսիվ հաճախականություն՝ մինչև իսկ գործի քննումը

Կոմիտեի յուրաքանչյուր ամենշաբաթյա նիստի ընթացքում՝ պատասխանող պետությունը ուղղված համապատասխան որոշումներով և պահանջներով:

- Նախագահի և Արտաքին գործերի նախարարի միջև կոմունիկացիա, և
- Միջանկյալ բանաձևի, հուշագրի կամ տեղեկատվական միջանկյալ բանաձևի ընդունում՝ վճռի կատարման վիճակի և կատարման ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ մանրամասն նկարագրությամբ:

Տեսականորեն, գործերը, որոնց դեպքում միջոցները մշտական կերպով չեն կատարվում, կարող են հանգեցնել մինչև իսկ պետության վտարմանը Եվրոպայի խորհրդից (կամ ղեկավար պաշտոններից հավանական վտարում, կամ ձայնի իրավունքից զրկում):

IV. Երկուդի ընթացակարգ

Գործերը քննության են ենթարկվում ստանդարտ կամ խստացված ընթացակարգով: Նախատեսվում է, որ գործերը մեծամասամբ քննության են ենթարկվելու ստանդարտ ընթացակարգով, այլ կերպ ասած՝ այն գործերը, որտեղ միջոցները կարող են սահմանվել արագ և որտեղ չկա անհամաձայնություն անդամ պետության և Նախարարների կոմիտեի միջև: Այդ գործերով պատասխանող պետությունները ներկայացնում են գործողությունների ծրագիր և/կամ գործողությունների վերաբերյալ զեկույց, որը գնահատվում է Նախարարների կոմիտեի կողմից, որն էլ գործը փակված է համարում այն ժամանակ, երբ խախտումը պատշաճ կերպով վերացվել է և, ընդունվել են ընդհանուր բնույթի միջոցներ:

Խստացված ընթացակարգը Նախարարների կոմիտեին թույլ է տալիս կենտրոնացնել իր ջանքերը և ժամանակը առավել կարևոր և/կամ բարդ գործերի վրա: Այդ գործերը պարբերաբար ներառվում են Նախարարների կոմիտեի նիստերի օրակարգում և այդ դեպքերում պետությունները սերտորեն համագործակցում են վճիռների կատարման վարչության հետ: 2010թ. դեկտեմբերի նիստի ընթացքում՝ աշխատանքային նոր մեթոդներ սահմանելու վերաբերյալ¹², Նախարարների կոմիտեում պետությունների ներկայացուցիչները համաձայնեցին, որպեսզի գործերը խստացված ընթացակարգով քննության ենթարկվեն հետևյալ չափանիշներով՝

- Հրատապ, անհատական բնույթի միջոցառումներ պահանջող վճիռներ
- Պիլոտային վճիռներ
- Վճիռներ, որոնցով բացահայտվում են Դատարանի և/կամ Նախարարների կոմիտեի կողմից արձանագրված կառուցվածքային և/կամ համակարգային լուրջ խնդիրներ, և
- Միջպետական գործեր¹³:

Գործը կարող է նորից ստանդարտ ընթացակարգով քննության ենթարկվել, երբ առավել բարդ քայլերն արդեն ձեռնարկվել են, կամ, այն կարող է կրկին քննության ենթարկվել խստացված ընթացակարգով, երբ պետությունը վճռի կատարման գործում չի համագործակցում կոմիտեի հետ: Այս գործիքը հնարավորություն է տալիս կոմիտեին ճնշումներ սահմանել «ըմբոստ» պետության նկատմամբ:

¹² 1100-րդ նիստի որոշումներ, 2 դեկտեմբերի 2010թ., ՄԻԵԴ վճիռների կատարման բարելավմանն ուղղված միջոցներ: Ինտերլակենի հռչակագրի և գործողությունների ծրագրի կատարման վերաբերյալ առաջարկություններ, GT-SUIVI, Interlaken (2010) CBS:

¹³ CM/INF/DH (2010) 45, 7 դեկտեմբերի 2010թ., ՄԻԵԴ վճիռների և որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն:

V. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը կատարման գործընթացին

Ճնշում գործադրելը

Բազմաթիվ անգամներ Դատարանի վճիռները կատարելու նպատակով Նախարարների կոմիտեի գործադրած ճնշումը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների վրա քննադատության առարկա է դարձել:¹⁴ Սակայն, հաճախ անտեսվում է այն հանգամանքը, որ դեմոկրատական համակարգում ճնշումը երբեք չի կարող բավարար լինել, եթե չկա քաղաքացիական հասարակության ներգրավվածություն: Քաղաքացիական հասարակությունը կարող է առանձնացնել նրբախնդիր հարցերը, արտահայտել իր մտահոգությունները, առաջարկել միջոցներ և բարձրացնել հասարակության իրազեկվածությունը կառավարության կողմից ձեռնարկված քայլերի մասին, ինչպես նաև ավելի լայն իմաստով բացատրել դրանց հետևանքները: ՀԿ-ները կարող են նախագուշացնել պետություններին որոշակի խնդիրների մասին՝ խնդրելով նրանց որդեգրել իրենց մոտեցումը Նախարարների կոմիտեի քննարկումների ժամանակ: Բացի ճնշում գործադրելու հնարավորությունները ընդլայնելուց, այդպիսի ներգրավվածությունը կարող է ծայրահեղ արժեքավոր լինել դեմոկրատական հասարակությունում մարդու իրավունքների վերաբերյալ երկխոսության մշակույթ խթանելու առումով: Պատասխանող պետության վրա ճնշում կարող է գործադրվել և պետք է գործադրվի ոչ միայն Նախարարների կոմիտեում: Շատ ավելի արդյունավետ է, երբ Ստրասբուրգի հետ միաժամանակ, ճնշում է գործադրվում ազգային մակարդակում տեղի մարդու իրավունքների հարցերով կազմակերպությունների, ՀԿ-ների և պառլամենտի կողմից՝¹⁵ մեծացնելով կիրառման գործընթացի քաղաքական թափանցիկությունը:

Այս տեսանկյունից, կարելի է պնդել, որ Կատարման բաժնի նոր աշխատանքային մեթոդներով ներմուծված ամենակարևոր միջոցն այն է, որ պետության կողմից վճիռների կատարման վերաբերյալ Նախարարների կոմիտե ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է հրապարակվեն¹⁶: Այդպիսով, նոր կողմ է ավելացել կատարման գործընթացին, այն է՝ քաղաքացիական հասարակության

¹⁴ Տե՛ս 1226 ԵԽԽՎ բանաձևը (2000), 28 սեպտեմբերի, 2000 թվական; CDDH, Վճիռների կատարման դանդաղեցման դեպքում լուծումների առաջարկներ, DH-PR (2005)001, 26 ապրիլի, 2005 թվական, էջ 18; Լ. Յվակ, «Եվրոպայի խորհրդի և դրա Նախարարների կոմիտեի դերը. ՄԻԵԿ 46(2) հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցների արդյունավետության գնահատում», էջ 15:

¹⁵ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը կոչ է արել երկրների պառլամենտներին ներմուծել հատուկ մեխանիզմներ և ընթացակարգեր՝ դրանց կողմից Դատարանի վճիռների կատարումը վերահսկելու համար: Տե՛ս 2010 թվականի նոյեմբերի 17-ի ԵԽԽՎ բանաձևը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերաբերյալ և 2010 թվականի դեկտեմբերի 20-ի դրան կից ներկայացված զեկույցը, Doc. 12455

¹⁶ Եթե, ելնելով դիմումատուի արդարացված շահերից կամ հանրային կարգի պաշտպանության նկատառումներից, գաղտնիություն չի պահանջվում: Մանրամասների համար տե՛ս Նախարարների կոմիտեի կանոնների կ.8-ը:

մասնակցությունը: Մա ավելին է, քան պարզապես տեսությունը. փաստաթղթերը պետք է հասանելի լինեն լայն հասարակության համար Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման բաժնի նոր կայքի միջոցով: Բաժնի կողմից գործերի գնահատման արդյունքները և վերահսկողության ընթացքում կոմիտեի կայացրած որոշումները կարելի է գտնել կայքի «Ընթացիկ գործեր» բաժնում, և դրանք առկա են բոլոր գործերի համար: Այս տեղեկատվության միջոցով կարելի է լիարժեք պատկերացում կազմել յուրաքանչյուր դեպքում տվյալ պահին փաստացի կատարման վերաբերյալ, և այն կարող են դիտել պետությունները, ՀԿ-ները, մարդու իրավունքների հարցերով ազգային ինստիտուտները (ՄԻԱԻ), դիմումատուները, մյուս միջազգային կազմակերպությունները և ցանկացած այլ շահագրգիռ կողմ:

Այս առումով Նախարարների կոմիտեի նախկին կանոնները հստակ չէին, և դրանցով միայն դիմումատուներին էր թույլատրվում տեղեկատվություն ներկայացնել անհատական միջոցների վերաբերյալ: Կանոններում ոչ մի անդրադարձ չէր կատարվում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերին: Իրավիճակը փոփոխվեց 2006 թվականին, երբ ընդունվեցին նոր կանոններ, որոնց համաձայն, ՀԿ-ներին և մարդու իրավունքների խթանման և պաշտպանության հարցերով ինստիտուտներին իրավունք ընձեռվեց կատարման միջոցների վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու Նախարարների կոմիտե:

Համաձայն փոփոխության ենթարկված կանոնների¹⁷

Կանոն 9

Նախարարների կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը

[...]

2. Նախարարների կոմիտեն լիազորված է քննելու հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև մարդու իրավունքների խթանման և պաշտպանության հարցերով ազգային ինստիտուտների կողմից ներկայացված ցանկացած տեղեկատվություն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ վճիռների կատարման վերաբերյալ:

3. Քարտուղարությունը համապատասխանաբար Նախարարների Կոմիտեի ուշադրությանն է ներկայացնում ցանկացած գրավոր տեղեկատվություն, որն առնչվում է սույն կանոնի 1-ին պարբերությանը: Այն նույն կերպ պետք է վարվի ցանկացած գրավոր տեղեկատվության հետ, որը կառնչվի սույն կանոնի 2-րդ պարբերությանը՝ կցելով տվյալ պատվիրակության (պատվիրակությունների) ցանկացած դիտարկում՝ պայմանով, որ դրանք փոխանցվեն Քարտուղարություն նման տեղեկատվություն ստանալու մասին ծանուցվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

¹⁷ Նախարարների կոմիտեի կանոնները վճիռների կատարման վերահսկողության և փոխադարձ համաձայնությամբ հարցի լուծման պայմանների վերաբերյալ (Ընդունվել են Նախարարների կոմիտեի կողմից 2006 թվականի մայիսի 10-ին՝ Նախարարների տեղակալների 964-րդ հանդիպման ժամանակ)

9-րդ կանոնի, ինչպես նաև համապատասխան տեղեկատվություն ստանալու հեշտության շնորհիվ մեծացել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը վճիռների կատարման գործում:¹⁸ Կատարման բաժնի կայքը բացվել է 2011 թվականին: ՀԿ-ներն ու մարդու իրավունքների հարցերով ինստիտուտներն այժմ կարող են մանրակրկիտ մոնիթորինգի ենթարկել պատասխանող պետության գործողությունները և ծանոթանալ համապատասխան զեկույցների ու գնահատման արդյունքների, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, մեկնաբանություններ կատարել դրանց վերաբերյալ՝ այսպես կոչված կ.9 փաստաթղթերի միջոցով: Պետությունները կարող են պատասխանել ներկայացված ցանկացած փաստաթղթի, և այդ պատասխանները նույնպես հրապարակվում են: Այս բարեփոխումներով կյանքի կոչվեց 2005 թվականին կայացած՝ Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթնաժողովի ընթացքում կատարված առաջարկությունը՝¹⁹ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում քաղաքացիական հասարակության մասնակցությունը մեծացնելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ կայուն կերպով աճում է ՀԿ-ների, մարդու իրավունքների պաշտպանի ազգային գրասենյակների և այլ ՄԻԱԻ-ների կողմից ներկայացվող կ.9 փաստաթղթերի թիվը: Քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված փաստաթղթերի միջոցով պարզաբանվել են պետությունների գործելակերպերի որոշ նրբություններ կամ շատ կարևոր դեպքերում իրավական դրույթների որոշ մեկնաբանություններ:²⁰

Ավելացված արժեքը

Քաղաքացիական հասարակությունը՝ ՀԿ-ները, ՄԻԱԻ-ները կամ ճնշում գործադրող խմբերը, չափազանց կարևոր միջնորդ են կատարման գործընթացում: Դրանք առանցքային դեր են խաղում Կատարման բաժնի և Նախարարների կոմիտե երկրում տեղի ունեցող իրադարձությունների մասին կարևոր տեղեկատվություն տրամադրելու առումով: Քաղաքացիական հասարակության

¹⁸ Հրապարակված փաստաթղթերը կարելի գտնել Կատարման բաժնի կայքի «Լրացուցիչ տեղեկատվություն» բաժնում:

¹⁹ «[...] Եվրոպայի խորհրդի աշխատանքներում ՀԿ-ների մասնակցությունը մեծացնելու նպատակով՝ որպես դեմոկրատական կառավարության թափանցիկությանը և հաշվետվողականությանը քաղաքացիական հասարակության ներդրումի կարևոր տարր:» Գործողության ծրագիր՝ ընդունված Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթնաժողովի ժամանակ, Վարշավա, 16-17 մայիս, 2005 թվական, CM (2005)80 վերջնական, 17 մայիսի, 2005 թվական, para.3

²⁰ St 'u, opինակ, Hirst (N.2) v. United Kingdom (App. N.74025/01), 2005 թվականի հոկտեմբերի 6-ի վճիռ, Tysiac v Poland (2007) 45 E.H.R.R. 4; D.H. v Czech Republic (2008) 47 E.H.R.R., Xenides-Arestis v Turkey (2007) 44 E.H.R.R. SE1; Burdov v Russian Federation (2009) 49 E.H.R.R. 2 (Փորձական վճիռ), A., B. and C. v Ireland (2011) 53 E.H.R.R. 13 գործերով ներկայացված փաստաթղթերը: Հարկ է նշել, որ ոչ անդման պետությունների ՀԿ-ները վճռում անդրադարձ կատարված որոշակի հարցի մասով համապատասխան տեղեկատվություն, իրավասություն և փորձ ունենալու դեպքում, նույնպես կարող են ներկայացնել իրենց կարծիքը Նախարարների կոմիտեին (տե՛ս Tysiac v Poland գործում Վերարտադրողական իրավունքների հարցերով կենտրոնի ներկայացրած փաստաթղթերը)

կազմակերպությունները տեղերում Կատարման բաժնի աչքերն ու ականջներն են և վերջինիս կարող են տրամադրել կարևոր «ստվերային զեկույցներ» լուրջ և նրբախնդիր դեպքերի վերաբերյալ: Այդպիսի ստվերային զեկույցների միջոցով կարող են պարզաբանվել և պարզաբանվում են երկրում առկա խնդիրները, ինչպես նաև դրանք ներառում են արժեքավոր վերլուծություն այն մասին, թե արդյոք կատարման համար առաջարկվող կամ արդեն իսկ կիրառվող միջոցները արդյունավետ են, թե ոչ: Դրանք կարող են պարունակել պետությունների Գործողությունների ծրագրերի և Զեկույցների օգտակար քննադատություն: Քաղաքացիական հասարակությունը հաճախ վեր է հանում մտահոգություն պատճառող այնպիսի հարցեր, որոնց Կատարման բաժինը իր իսկ սահմանափակումների պատճառով չի կարողանում ուշադրություն դարձնել կամ բավականաչափ տեղեկացված չէ երկրի իրավիճակի մասին դա անելու համար: Կատարման բաժինը նման զեկույցներ է ստացել, մասնավորապես, հղիության արհեստական ընդհատման, ահաբեկչության և գնչունների իրավունքների հետ կապված դեպքերի վերաբերյալ:

Միացյալ Թագավորությունից ստացված մի շարք գործեր հետաքրքրի օրինակ են այն բանի, թե ինչպես է քաղաքացիական հասարակությունը ներգրավվել կատարման գործընթացում: Հրատարակված Միացյալ Թագավորության [2005] ՄԻԵԴ 681 գործում²¹, որը վերաբերում էր բանտարկյալների ընտրության իրավունքի հակասական խնդրին, քաղաքացիական հասարակությունը ծայրահեղ ակտիվ մասնակցություն է ունեցել կատարման գործընթացում: Մի շարք ՀԿ-ներ, ներառյալ՝ Բանտերի բարեփոխման հիմնադրամը, Լիբերթին և ԵԱԻՄ կենտրոնը, փաստաթղթեր են ներկայացրել Նախարարների կոմիտե և շարունակում են այդպես անել, քանի դեռ գործի ընթացքը վերահսկվում է: Այս փաստաթղթերը օգտակար են եղել պարզաբանելու համար, թե ինչ ընդհանուր միջոցներ պետք է ձեռնարկեն իշխանությունները ՄԻԵԴ-ի վճռի դրույթները կատարելու նպատակով, ինչպես նաև շատ դեպքերում իշխանություններին դրդելու համար անհապաղ քայլեր ձեռնարկել: Փաստաթղթերից մեկում Բանտերի բարեփոխման հիմնադրամն²² անգամ կոչ է արել Նախարարների կոմիտեին կիրառել իր լիազորությունները՝ համաձայն ՄԻԵԿ 14-րդ արձանագրության, և դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան այն հարցով, թե արդյոք ՄԹ-ի կառավարությունը չի կատարել իր պարտավորությունները: Թերևս քաղաքացիական հասարակությունը կարող է համարձակ լինել իր խնդրանքներում՝ բարձրացնելով դժվար հարցեր և Նախարարների կոմիտեից պահանջելով իմաստալից գործողություններ: Նմանապես, ՄկԿերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում²³ (մի խումբ գործեր, որոնք վերաբերում են Հյուսիսային Իռլանդիայում ընդունված հետաքննչական մեխանիզմներին) մի շարք ՀԿ-ներ փաստաթղթեր են ներկայացրել Նախարարների

²¹ Hirst (N.2) v. United Kingdom (App. N.74025/01), 2005 թվականի հոկտեմբերի 6-ի վճիռ

²² Sté 'u DD (2010)410E փաստաթուղթը (Բանտերի բարեփոխման հիմնադրամի՝ 2010 թվականի սեպտեմբերի 3-ի նամակը՝ հասցեագրված Նախարարների կոմիտեին)

²³ McKerr v United Kingdom (2002) 34 E.H.R.R. 20

կոմիտե: 2012 թվականի փետրվարին Արդարադատության իրականացման կոմիտեի և Պատ ֆինեկան կենտրոնի կողմից համատեղ ներկայացված փաստաթղթերում Նախարարների կոմիտեին կոչ է արվում շարունակել տվյալ գործի առնչությամբ ընդհանուր միջոցների վերահսկողությունը: Այդ փաստաթղթում երկու կազմակերպություններն էլ մանրամասն ներկայացրել են տեղի ունեցող զարգացումները, որոնք խոչընդոտել են Նախարարների կոմիտեի կողմից գործի փակմանը:

Սակայն, մի շարք էական գործերում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը նվազագույն մակարդակի վրա է եղել, մինչդեռ ակնկալելի էր հակառակը: Օրինակ, Ա-ն ընդդեմ Իռլանդիայի գործում²⁴, որը վերաբերում էր Իռլանդիայում հղիության արհեստական ընդհատման հարցին, մինչ օրս միայն երկու կազմակերպություն է ներկայացրել կ.9 փաստաթղթեր, այն է՝ Ընտանիքի պլանավորման իռլանդական ասոցիացիան և Քաղաքացիական ազատությունների իռլանդական խորհուրդը: Սույն վերլուծությունը կազմելու ժամանակ այդ գործը դեռևս վերահսկվում էր, սակայն ակնկալվում էր, որ շատ ավելի շատ փաստաթղթեր կներկայացվեին քաղաքացիական հասարակության կողմից այդքան հակասական և կարևոր թեմայի վերաբերյալ, ինչպիսին է արհեստական ճանապարհով հղիության ընդհատումը: Նմանապես, Ռանցեն ընդդեմ Կիպրոսի գործով²⁵, որը վերաբերում էր Կիպրոսում և Ռուսաստանում թրաֆիքինգին, քաղաքացիական հասարակության կողմից ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

Դժվար է մատնանշել այն պատճառները, թե ինչու քաղաքացիական հասարակության կողմից ոչ մի արձագանք չի ստացվել այդքան կարևոր գործերի վերաբերյալ: Հնարավոր է, որ քաղաքացիական հասարակությունը բավականաչափ տեղեկացված չէ, թե ինչպես այն գործնականում կարող է ընդգրկվել կատարման գործընթացում: Բացի դրանից, ՀԿ-ները թերևս ավելի քիչ նշանակություն են հատկացնում կրկնվող գործերին, մինչդեռ իրականում դրանք կարող են կարևոր դեր խաղալ այնպիսի համակարգային խնդիրների լուծման հարցում, որոնք ազգային իրավական համակարգերը կարող են փոխել:

Կանոն 9 փաստաթղթեր

Որն է Կանոն 9-ը փաստաթղթերի ձևաչափը: Կանոններով որոշակի ձևաչափ չի սահմանվում այս փաստաթղթերի համար: Սակայն, դրանք հնարավորինս ընդգրկուն ձևով պետք է անդրադառնան ՀԿ/ՄԻԱԻ-ի մտահոգություններին վճռի կատարման վերաբերյալ և ընդգրկեն ցանկացած օգտավետ առաջարկ գործի լուծման համար: Փաստաթղթերում հստակ պետք է նշվի, թե ինչու է ՀԿ/ՄԻԱԻ-ն հետաքրքրված տվյալ հարցով և ինչ համապատասխան փորձ ունի այն տվյալ ոլորտում: Նպատակահարմար է նաև, որ փաստաթղթերում ներառվի այնպիսի

²⁴ A v Ireland (2011) 53 E.H.R.R. 13

²⁵ Rantsev v Cyprus (2010) 51 E.H.R.R. 1

տեղեկատվություն, որը պաշտոնական աղբյուրներից հեշտությամբ հասանելի չէ Կատարման բաժնի համար, ինչպես օրինակ վիճակագրական տվյալներ կամ ուրիշ «ներքին» տեղեկատվություն, որը կարող է ունենալ միայն տվյալ ՀԿ-ն: Եթե Հկ-ները ցանկանում են ներառել միջոցների գնահատման իրենց արդյունքները, ապա դա նույնպես շատ արժեքավոր է: Կարևոր է գիտակցել, սակայն, որ ներկայացվող փաստաթղթերը քարոզչական փաստաթղթեր չեն կամ չեն կարող օգտագործվել՝ որպես երկրի գործելակերպում կամ գործողություններում ընդհանուր փոփոխություն կատարելու քաղաքական գործիք: Դրանք պետք է վերաբերվեն միայն վճռի դրույթներին և անդրադառնան դրանց մասով արձանագրված որոշակի խախտումների: Հարկ է նշել, որ այն փաստաթղթերը, որոնք անդրադառնում են ոչ միայն վճռին կամ բացահայտված խախտումներին կամ խիստ քարոզչական բնույթ ունեն, ավելի քիչ ազդեցություն ունեն Նախարարների կոմիտեի և պատասխանող պետության վրա, քան նրանք, որոնք ավելի օբյեկտիվորեն են կազմված և ավելի հստակ են պարզաբանում խնդիրը՝ ներառելով վիճակագրություն և փաստական վերլուծություն:

Սովորաբար, կ.9 փաստաթղթերը կազմվում են որոշակի ձևաչափով.

1. ՀԿ-ի, դրա դերի և փորձի նկարագրություն,
2. համապատասխան գործի փաստական հանգամանքների նկարագրություն՝ մասնավորապես խախտման աղբյուրին առնչվող հիմնական հարցերի կամ ՀԿ-ի կողմից ընտրված հարցերի վրա կենտրոնացմամբ,
3. տվյալ գործնական իրավիճակի նկարագրություն (իրավական համակարգի, դատարանների գործելակերպի, վիճակագրության և այլնի նկարագրություն),
4. իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցներին անդրադարձ և դրանց գնահատում՝ բոլոր համապատասխան փաստարկները հիմնավորող մանրամասն տեղեկատվությամբ,
5. պետությունների կողմից կիրառման համար առաջարկվող միջոցների նկարագրություն, դրանց կատարելագործման կամ փոփոխման առաջարկներ կամ որոշակի հարցեր, որոնց պատասխանները Նախարարների կոմիտեն պետք է պահանջի պատասխանող կառավարությունից:

Կանոն 9 փաստաթղթերը պետք է Կատարման հարցերով բաժին ներկայացվեն էլեկտրոնային փոստի²⁶ կամ փոստի²⁷ միջոցով և հասցեագրված լինեն Կատարման բաժնին: Փաստաթղթերը ստանալուն պես Կատարման բաժնին ուղարկում է դրանք Ստրասբուրգում գտնվող համապատասխան Մշտական ներկայացուցչությանը և

²⁶ dgl.execution@coe.int

²⁷ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման բաժին, Գլխավոր դիրեկտորատ 1 Մարդու իրավունքներ և օրենքի գերակայություն, Եվրոպայի խորհուրդ F-67075, Strasbourg Cedex, France

պատասխանող երկրին: Այնուհետև, պատասխանող երկիրը հինգ օրվա ընթացքում կարող է պատասխան ներկայացնել: Հինգ օրվա ժամկետը լրանալուց հետո ներկայացված փաստաթղթերը իշխանության պատասխանի հետ ուղարկվում են Նախարարների կոմիտե և հրապարակվում Կատարման բաժնի կայքի միջոցով:

Կ.9-ը փաստաթղթերը, որպես կանոն, կարող են ներկայացվել ցանկացած ժամանակ, քանի դեռ գործն ընթացքի մեջ է Նախարարների կոմիտեում: Որոշիչ, սակայն, կարող է լինել այն ժամանակը, երբ վճռի կատարման հարցում որևէ փոփոխություն է տեղի ունենում և պատասխանող պետությունների կողմից նոր տեղեկատվություն է տրամադրվում Նախարարների կոմիտեին: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է պարբերաբար ստուգեն կայքը՝ իրենց հետաքրքրող գործերի առնչությամբ նոր գործողության ծրագրերի և զեկույցների մասին տեղեկանալու համար:

Պատասխանող պետության կողմից Գործողությունների ծրագիր/զեկույց ներկայացնելուց հետո վեց ամսվա ընթացքում Կատարման բաժինը պետք է գնահատի առաջարկվող միջոցները: Լավ կազմված և ամբողջությամբ հիմնավորված կ.9 փաստաթղթերը կարող են էական ազդեցություն ունենալ գնահատման վրա: ՀԿ-ների կարծիքը նաև հաշվի կառնվի այն դեպքում, եթե դրանք դիտարկումներ ներկայացնեն Նախարարների կոմիտեի կողմից իրականացված՝ միջոցների գնահատման վերաբերյալ: Ծանրակշիռ կ.9 փաստաթղթերը կարող են նաև հանգեցնել Նախարարների կոմիտեի կողմից գործի քննարկման:

Բացի դրանից, կ.9 փաստաթղթերը կարող են շատ օգտակար լինել գործերի կարևորությունը գնահատելիս: Թեև Կատարման բաժինը և, ի վերջո, Նախարարների կոմիտեն է պատասխանատու միջոցների գնահատում իրականացնելու համար, այդ ընթացքում կ.9 փաստաթղթերը կարող են ունենալ տեղեկատվական բնույթ և լինել ազդեցիկ:



Վճիռները փոխանցվել են Նախարարների կոմիտեին

Կանոն 9(2). Նախարարների կոմիտեն կարող է քննության առնել հասարակակա՝ կազմակերպություններից կամ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտներից ստացված դիմումները կապված վճիռների կատարման հետ(Կոնվենցիայի Հոդված 46, կետ 2



ներկայացված գործողությունների ծրագիր/գործողությունների վերաբերյալ զեկուլց

- Մինչ վերջնական որոշման ընդունումը, հկ-երը կարող են
 - Ճնշում գործադրել պետությունների վրա՝ նախարարների կոմիտեին դիմումներ ուղարկելու միջոցով, օրինակ.
 - պահանջելով, որպեսզի պետությունները ներկայացնեն գործողությունների ծրագիր/գործողությունների վերաբերյալ զեկուլցներ,
 - ներկայացնելով առաջարկություններ՝ կառավարության կողմից վճով կատարման միջոցառումների վերաբերյալ
 - Կոչ անել Նախարարների կոմիտեին վճիռն ուղարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ մեկնաբանություն ստանալու համար
 - Կոչ անել կազմակերպել հանրային լսումներ Նախարարների կոմիտեի մարդու իրավունքների հարցերով նիստի ընթացքում
 - Ներկայացնել դիտարկումներ գործողությունների ծրագիր/գործողությունների վերաբերյալ զեկուլցների վերաբերյալ
 - Կոչ անել փոփոխել ստանդարտ ընթացակարգը խստացված ընթացակարգով և հակառակը
 - Կոչ անել ընդունել միջանկյալ բանաձև
 - Կոչ անել նախաձեռնել խախտումներին արժագանքելու ընթացակարգ բացառիկ դեպքերում
 - Դեմ արտահայտվել վերահսկողական վարույթի ավարտի վերաբերյալ



Նախարարների կոմիտեի կողմից ընդունված վերջնական որոշում

Հկ-երի մասնակցությունը վարույթին ավարտվում է Նախարարների կոմիտեի կողմից ընդունված վերջնական որոշմամբ

VI. Հասարակական կազմակերպությունների դերը ազգային մակարդակում վճռի կատարման նկատմամբ վերահսկողության ուժեղացման գործում

Մարդու իրավունքների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները չունեն որևէ պաշտոնական գործառույթներ ՄԻԵԴ վճիռների կատարման գործում: Այնուամենայնիվ, նրանց դերը պետք է կենտրոնացնել ազգային և միջազգային մակարդակում վճռի կատարմանն ուղղված մոնիթորինգի և քարոզչության վրա: Հկ-երը կարող են հանդես գալ անհատական գործերով Նախարարների կոմիտեի առջև, ինչպես նաև պայքարել ազգային և միջազգային մակարդակում համակարգային լուծումների ընդունման համար:

Մի շարք ազգային դերակատարներ պետք է ակտիվ դեր խաղան վճիռների կատարման գործընթացում՝ ՄԻԵԴ-ի առջև որպես ներկայացուցիչ հանդես եկող նախարարություն (Խորհրդարաններ, ազգային դատարաններ, մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտներ և հկ-եր): Համաձայն Նախարարների կոմիտեի կանոնակարգի 9-րդ կանոնի՝ Նախարարների կոմիտե փաստաթղթեր կարող են ներկայացնել նաև գործընթացով շահագրգիռ այլ մարմիններ, օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտները և փաստաբանների միությունները: Այս ընթացակարգը կարող է հանդիսանալ նաև հկ-երի գործունեության պոտենցիալ ոլորտ: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտները և փաստաբանների միությունները դեռևս բավականին ակտիվ չեն այդ գործընթացում և հազվադեպ են դիմում այս ընթացակարգային հնարավորությանը: Հկ-երը կարող են ոչ միայն նպաստել ազգային կազմակերպությունների ակտիվ դերակատարմանը Նախարարների կոմիտեի առջև, այլ նաև համագործակցել նրանց հետ փաստաթղթերի նախապատրաստման գործում:

Ազգային մակարդակում կառավարությունների կողմից «Գործողությունների ծրագրի» նախապատրաստման վրա ազդեցություն ունենալը հկ-երի համար քարոզչության առանցքային մասն է կազմում, որոնք այդ կարող են իրականացնել կառավարության ներկայացուցիչներին կամ ներպետական իշխանություններին կամ վճիռների կատարման համար պատասխանատու համակարգողներին լոբբինգի միջոցով: Կառավարության կողմից ներկայացված հավակնոտ «Գործողությունների ծրագիր»-ը ոչ միայն թույլ կտար ՄԻԵԴ չափանիշների ամբողջական իրականացմանը, այլ նաև կաջակցեր Նախարարների կոմիտեի գործառույթների իրականացմանը՝ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործում: Հարկ է նշել, որ հկ-երի նպատակը պետք է լինի խթանել իշխանություններին ազգային մակարդակում վճռի պատշաճ կատարման համար՝ այն ուժի մեջ մտնելու պահից ի վեր:

Վճիռների կատարման արդյունավետությունը բարձրացնելու համար Հկ-երը պետք է տարածեն Նախարարների կոմիտեի համար նախապատրաստած դիմումները

պոտենցիալ շահագրգիռ ազգային իշխանության մարմիններին (Ոստիկանություն, մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտ, դատական ատյաններ, օրենսդրության մշակման հարցերով պատասխանատու տարբեր նախարարություններ):

Որոշ անդամ պետություններում (Միացյալ թագավորություն, Նիդեռլանդներ) ՄԻԵԴ վճիռների կատարումը ենթակա է խորհրդարանական վերահսկողության: Կառավարությունները պատրաստում են զեկույցներ, որոնք հանդիսանում են խորհրդարանական քննարկման նյութ: Սովորաբար, մարդու իրավունքների խորհրդարանական հանձնաժողովները պարբերաբար հանդիպում են քննարկելու վճռի կատարման հետ կապված վիճակը և կառավարության կողմից կատարված առաջընթացը: Հկ-երը կարող են մասնակցել նման հանդիպումներին: Վճիռների կատարման նկատմամբ ազգային խորհրդարանների վերահսկողության ուժեղացումը բազմիցս ընդգծվել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից:

Հկ-երը կարող են աշխատել բարձրացնել վճիռների կատարման թափանցիկությունը ազգային մակարդակում: Լավագույն լուծումը կարող է լինել տարբեր վճիռների կատարման հետ կապված վիճակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը մարդու իրավունքների պաշտպանի կամ իշխանության այլ համապատասխան մարմնի կողմից: Սա հնարավորություն կտար հկ-երին հետևել վճիռների կատարման գործընթացին և դրական ազդեցություն ունենալ գործողությունների ծրագրի մշակման սկզբնական կամ գործընթացի այլ փուլի ընթացքում:

Հկ-երը մեծ դերակատարում ունեն ազգային մակարդակում համակարգային փոփոխությունների ուղղությամբ քարոզչության, ինչպես նաև կառավարության կողմից վճիռների կատարման վերաբերյալ պարբերաբար զեկույցման համակարգի ներկայացման գործում: Կառավարության զեկույցները պետք է ենթակա լինեն խորհրդարանական՝ վճիռների կատարման վերահսկողության հարցերով զբաղվող հանձնաժողովների վերահսկողությանը: Չնայած Եվրոպայի խորհրդի անդամ որոշ երկրներում առկա քաղաքական սահմանափակումներին՝ խորհրդարանական վերահսկողության համակարգը կարող է կիրառվել նրանց մեծ մասի դեպքում:

Ավելին կարող է և պետք է արվի նաև ՄԻԵԿ-ի կատարման և անդամ պետությունների օրենսդրություններում ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վերաբերյալ: Հիմնական մանդատները, որոնց համաձայն՝ իրավունքի հանրային և մասնավոր բոլոր սուբյեկտները պետք է հետևեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մեկնաբանված Եվրոպական կոնվենցիային, կարող են արժեքավոր հիշեցում լինել ազգային առանցքային այնպիսի օրենքներում, ինչպես օրինակ՝ քրեական, քրեական դատավարության մասին օրենսգրքերն են, Դատարանների մասին օրենքն է, և այլն: Բոլոր անդամ պետություններում պետք է գործեն խորհրդարանական հանձնաժողովներ կամ նույնիսկ՝ օրենսդիր, գործադիր և

դատական իշխանությունների անդամներից բաղկացած համատեղ հանձնաժողով՝ վերահսկելու և հաստատելու խորհրդարանին ներկայացվող բոլոր օրինագծերի համապատասխանությունը ՄԻԵԿ-ին: Ավելին, նման (համատեղ) հանձնաժողովը պետք է պարբերաբար վերանայի գործող օրենսդրությունը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան լինելու նպատակով, մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի կողմից ընդունված կարևոր որոշումներից հետո: Օրենսդրական գործընթացների նկատմամբ վերահսկողությունը կարող է լինել հկ-երի կողմից իրականացվող քարոզչական դերակատարում: Նման մեխանիզմի ներկայացումը հաճախ պահանջում է Խորհրդարանի ընթացակարգի կանոններում փոփոխություն: Այդ կանոնների վերաբերյալ փոփոխությունների մշակումը կարող է հանդիսանալ սկզբնակետ հկ-երի քարոզչության գործում: